Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Ջաջուռի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար 1-ին դասարանի, թափուր տեղի համար 13/տասներեք / դասաժամ, դասվար 3-րդ դասարանի, թափուր տեղի համար 16/տասնվեց / դասաժամ , դասվար 4-րդ դասարանի, թափուր տեղի համար 17/տասնյոթ / դասաժամ և երաժշտություն առարկայի թափուր տեղի համար 6/վեց / դասաժամ : Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը : Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում՝ (Ձև 1),
- մեկ լուսանկար՝ 3#4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարության հրապարակման օրվանից 2024 թվականի մարտի 29-ից մինչև 2024 թվականի ապրիլի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը

բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի: Մրցույթը տեղի կունենա 2024թվականի ապրիլի 16- ին՝ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզի <<Ջաջուռի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում.հասցե ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք բնակավայր Ջաջուռ փողոց 3 շենք 57

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)165774 հեռախոսահամարով: